

ի թվ. Հայոց ՌԿԸ. մայիս ամսոյ ԻԵ. Երեք-
շաբթի, ձեռամբ... անարհեստ գրչի Յոհան-
նիսի որդոյ պարոն Անտրէշի, ի... մայրա-
քաղաքն Լէվ կոչեցեալ, ընդ հովանեաւ
Ննջման սուրբ Աստուածածնին¹²: Ուրիշ
գրիչ մը՝ Յովհ. Կամենցի օրինակելով Գր.
Տաթեւացոյ Լուծմունքը կը յայտնէ¹³ թէ
ստացողն է «Տէր հոգեւոր Ղուկաս եպիսկո-
պոսն Ս. Երուսաղէմայ», «զի այս տարին էր
իջեալ ի նուիրակութեան սուրբ Երուսաղէ-
մայ համար եւ եա գրել... թվ. ՌԿ. եւ Ը.
աւելի, յունիս ամսոյն ԺԵ.»: Եւ դարձեալ
«զի ցանկացող եղեւ ամի նուիրակն Երու-
սաղէմի... որ յայսմ ամի եկն ի Լեհի, տե-
սող եղեւ այս սուրբ տառի ... ի թուականիս
... ՌԿ եւ Ը աւելի, Սեպտեմբերի քսան եւ
ութի, որ է աւրն երեքշաբթի ի Կամենից
ամուր քաղաքի»: Սեպտեմբերի 28էն քիչ յե-
տոյ մեկնած ըլլալու է Ղուկաս Լեհաստանէն:

Սիմէոն իւր ետեւ ունէր պանդխտու-
թեան տասներկու տարիներ, ինչպէս ինքը
կը գրէ. «Եւ կատարեցաւ ԺԲ. ամ պանդխ-
տութեան իմոյ» (էջ 335): Ապրած էր բազ-
մավիշտ տարիներ, բայց առանց ընկճելու՝
յարատեւութեամբ նկրտելով հասնիլ իւր ծրա-
գրած նպատակներուն. որոնց եւ հասաւ:

¹² Ձեռ. էջմիածնի, Թ. 502, 298բ:

¹³ Հրատ. Արեւելեան Մամուլ, 1897, էջ
746—747. Լոյս, 1905, էջ 776—778. Կամենից,
էջ 174. Աղանունի՝ Միարանք եւ այցելուք հայ Երու-
սաղէմի, էջ 236—237: